# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդևազի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսման (2-րդ լսում)**

21.07. 2025թ Գնդեվազ բնակավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ. հուլիսի 21-ին, ժամը 12:00-ին Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Աղասի Առաքելյանը, Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ՝ Արսեն Գառնիկյանը, Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ՝ Մոմիկ Մարգարյանը, Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանը, առաջին կարգի մասնագետ Մեսրոպ Հարությունյանը: «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ ընկերության ներկայացուցիչ Շահեն Խաչատրյանը, համայնքի բնակիչներ (ներկաների ցուցակը կցված է):

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ, որ փորձաքննական գործընթացի ժամկետը սահմանվում է 40 աշխատանքային օր, որ այս փուլից հետո, օրենքով սահմանված կարգով տրվելու է պետական փորձաքննական եզրակացություն:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսում: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է: Հանրային լսումների վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող թերթում, փակցվել է մարզպետարանի, Ջերմուկի համայնքապետարանի շենքում փորձաքննական կենտրոնի և համայնքապետարանի պաշտոնական կայքերում:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, մեղմող միջոցառումները, մշտադիտարկումները:

Գոհար Մինասյանն անդրադարձավ մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներին, ներկայացրեց նաև հաշվետվության վերաբերյալ դիտողությունները, կապված կոորդինատների, կադաստրային տեղեկատվության և Կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ: Ներկայացվեց, որ նախատեսվող գործունեության տարածքի որոշ մասը հանդիսանում է Հերիերի նոսրանտառային արգելավայրի տարածք: Ընկերության ներկայացուցիչ Շահեն Խաչատրյանը պարզաբանեց, որ ներկայացրել են ինչպես հնագիտական, այնպես էլ կարմիր գրքում գրանցված տեսակների բացակայությունը հավաստող մասնագիտական եզրակացություններ: Պարզաբանեց, որ գործունեության համար հայցվող տարածքը փաստացի Հերիերի արգելավայրի տարածք չի հանդիսանում, քանի որ հայցվող տարածքը ընկերության կողմից վարձակալված է իսկ արգելավայրերը վարձակալության չեն տրամադրում: Շ.Խաչատրյանը նշեց, որ հարցում է արվել կադաստրի պետական կոմիտեին, վերջինս տրամադրել է բնակավայրի հատակագիծը, որտեղ արգելավայրի հետ հայցվող տեղամասը չի համադրվում: Այն՝ որ կադաստրային քարտեզներում առկա են անճշտություններ հաստատեցին նաև Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ՝ Արսեն Գառնիկյանն ու Գնդեվազ բնակավայրի վարչական ղեկավար Արսեն Մկրտչյանը: Շ.Խաչատրյանը նշեց, որ տեղամասում կատարվել է փաստացի իրավիճակային քարտեզագրում և ներկայացվել հաշվետվությունում:

Ինչ վերաբերում է ջրի բերման աղբյուրին, Շ.Խաչատրյանը նշեց, որ աշխատանքներն իրականացվելու են ընդամենը մեկ օրում, ընկերությունը ջուրը կբերի շշալցված տարբերակով:

Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ՝ Մոմիկ Մարգարյանը հարց ուղղեց թե որքա՞ն գումար են նախատեսում համայնքի սոցիալական աջակցության համար, ինչին Շահեն Խաչատրյանը պարզաբանեց, որ դեռ երկրաբանական ուսումնասիրություն է, արդյունահանման փուլում կնախատեսվեն: Բնակիչներից հարցրեցին թե որքա՞ն է գետից հեռավորությունը հայցվող տեղամասից, ինչին Շահեն Խաչատրյանը պատասխանեց, որ պահպանել են գետից 33 մ հեռավորությունը:

Այնուհետև Գոհար Մինասյանը հարցրեց, թե արդյո՞ք համայնքը տալիս է իր համաձայնությունը նախատեսվող գործունեությանը, ինչին մասնակիցները պատասխանեցին, որ կողմ են: Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Գոհար Մինասյան

«Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Կ.Գևորգյան